
**ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԵՐԸ
ԴԱՏԱԿԱՆ ՆԱԽԱԴԵՊԻ ՈՒ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Անահիտ Նալբանդյան

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի

և իրավունքի ինստիտուտի հայցորդ

DOI:10.63925/18294847-2025.op20-08

Համառոտագիր: Սույն հոդվածում հանգամանորեն վերլուծվում է դատական իշխանության բովանդակային հասկացությունը, էությունը, բնութագրական հատկանիշները և նրա դերն ու նշանակությունը դատական նախադեպի, դատական պրակտիկայի ձևավորման և զարգացման գործընթացներում: Դատական իշխանության նման կարգավիճակը պայմանավորված է նրանով, որ այն դիտարկվում է որպես պետական իշխանության անկախ ու ինքնուրույն ճյուղ և օժտված է դրան համապատասխան գործառույթային հզորություններով:

Բանալի բառեր. դատական իշխանություն, նորմաստեղծ գործառույթ, պետական իշխանություն, դատական նախադեպ, դատական պրակտիկա, դատական հայեցողություն:

Դատական նորմաստեղծ գործունեության հիմնական արդյունքների՝ դատական նախադեպերի և դատական պրակտիկայի մշակման գործում էական դերակատարում ունի դատական հայեցողությունը¹:

XIX դարի վերջերից դատական հայեցողության ընկալման շուրջ գոյություն են ունեցել և այժմ էլ գոյություն ունեն դատավորի ազատության չափին առնչվող մի շարք տեսություններ: Ըստ որում՝ «դատական հայեցողություն» երևույթն առկա է բոլոր երկրների իրավական համակարգերում, բայց իրավական հարցերի (կոնֆլիկտների) լուծման դեպքում տարբեր են դատավորի ազատության չափը որոշելու ընկալումները:

¹ Տե՛ս **Аарон Барак**. Судейское усмотрение. Пер. с англ.М., 1999: Տե՛ս նաև **Ղամբարյան Արթուր**, Դատական քաղաքականության մեթոդաբանական հիմնախնդիրները: Երևան, 2011, Նույնի՝ Դատական հայեցողության//«Իրավագիտության հարցեր» №2, 2005, էջ 68-75:

Դատավորի ազատության չափն իրավունքի համաշխարհային երկու ընտանիքներում (անգլոսաքսոնական և ռոմանագերմանական) դարձյալ կապված է դատական նախադեպեր ստեղծելու և դրանք որպես իրավունքի աղբյուր դիտարկելու հիմնախնդրի հետ: Եթե Ընդհանուր իրավունքում դատավորը կարող է միավորել դատարանի իրավաստեղծ և իրավակիրառ գործառույթները և ստեղծել նոր նախադեպեր կամ կիրառել նախկինում ընդունված նախադեպը, կամ էլ ընդարձակել, կամ նեղացնել վերջինիս բովանդակությունը և գործն իր հայեցողությամբ լուծել ցանկացած մոտեցմամբ (իր ուզած տարբերակով), ապա Մայրցամաքային (ռոմանագերմանական) իրավունքում դատավորը կաշկանդված է գրված օրենքով. նա այսպես կոչված՝ «օրենքի ստրուկն» է և կարող է սոսկ ընտրություն կատարել միայն օրենքով նախատեսված մի քանի լուծումների մեջ, գործի հանգամանքները գնահատել, իրավական նորմը մեկնաբանել իր հայեցողությամբ՝ դարձյալ դուրս չգալով օրենքի շրջանակներից: Նա չի կարող շրջանցել օրենքը և իրավական բացը հաղթահարել իր հայեցողությամբ, որը, փաստորեն, իրավունքի նկատմամբ պոզիտիվիստական մոտեցման արդյունք է:

Իրավունքի պոզիտիվիստական (մանավանդ՝ նորմատիվիստական) մոտեցման, դոգմատիկ տեսությանը հակառակ՝ իրավունքի այդ նույն դպրոցի շրջանակներում տարածում գտած ազատ իրավունքի և նրանց հետ համերաշխ բնական իրավունքի դպրոցի նախահեղափոխական շրջանի մի շարք ներկայացուցիչների կարծիքով՝ օրենքի իմաստի և արդարության սկզբունքի միջև հակասության դեպքում դատավորները պետք է հիմնվեն այդ սկզբունքի վրա և հարցը լուծեն նշված սկզբունքի հաշվառմամբ՝ խղճի թելադրանքով: Այսպես, ըստ Ի. Ա. Պոկրովսկու «Դատավորի դերի նման ընկալման դեպքում վերջինս, ըստ էության, ձեռք կբերեր վերօրինական բնույթ, որը կարտահայտվեր նրանում, որ եթե արդարությունն իրականում հակասում է գրված օրենքին, ապա պետք է դատել արդարությանը համապատասխան»²: Բնական է, որ իրավունքի պոզիտիվիստական մոտեցման շատ հեղինակներ չընդունեցին Ի. Պոկրովսկու մոտեցումը: Նրանցից, օրինակ, Գ. Շերշենևիչը գրում էր, որ «արդարադատությունը կամ ըստ նպատակահարմարության սկզբունքի իրավունքի նորմի կիրառումը ոչնչացնում է հրապարակված ընդհանուր կանոնների ողջ

² См. И. Покровский И.А. Основные проблемы гражданского права. М., 1998, էջ 96-97,

նշանակությունը: Օրինականության սկզբունքի դեմ առարկությունն առարկություն է հենց իր՝ նորմի դեմ: Օրինականության սկզբունքի վրա հարձակում նշանակում է պնդել վերականգնել այն, ինչը նորմը կոչված էր վերացնել»³:

Հայաստանի Հանրապետությունում, ի տարբերություն դատական նախադեպը չընդունած ՌԴ իրավական համակարգի, այսօր սահմանափակ ձևով, փաստորեն, գործում է ազատ իրավունքի տեսությունը, որի համաձայն ստորադաս դատարանը պարտավոր է հաշվի առնել ՀՀ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունները կամ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան (ՀՀ դատական օրենսգրքի 6-րդ և 10-րդ հոդվածներ): Իրավամեկնաբանման նախադեպի գոյությունը Հայաստանում կարող է աստիճանաբար իրավական համակարգը տանել դեպի դատական նախադեպի ընդունման, եթե, իհարկե, ներդրվի օրենքի և իրավունքի համանմանության կիրառման անհնարինության դեպքում վճիռները բարեխղճության, ողջամտության և արդարության պահանջներից ելնելով կայացնելու վերաբերյալ մեր առաջարկը: Իհարկե, դրան զուգահեռ անհրաժեշտ կլինի ապահովել դատավորների կրթության բարձր մակարդակ և նրանց առաջխաղացման ճիշտ կազմակերպում, որն իր հերթին կապահովի և՛ արդարություն, և՛ անաչառություն, և՛ իրավունքի գերակայություն: Չէ՞ որ. «...դատավորը գործը ճիշտ լուծելու համար պետք է ուսումնասիրի հասարակությունում առկա բոլոր չափորոշիչները՝ կանոնները և սկզբունքները, որոնք բարոյական և քաղաքական մշակույթի տարրերից են և գոյություն ունեն՝ անկախ իրավական ինստիտուտներում դրանց ամրագրումից»⁴:

Պոզիտիվիստական դիրքերից վերլուծելով դատական հայեցողության՝ հասկացության բնորոշման ռուս գիտնականների տեսակետները՝ կարելի է եզրակացնել, որ հրապարակում եղած բնորոշումներից ամենաընդունելին Ա.Բարակի և Ա.Բոնների սահմանումներն են: Ըստ Ա.Բարակի՝ դատական հայեցողությունը երկու կամ ավելի այլընտրանքների միջև՝ օրենքի վրա հիմնված ընտրություն կատարելն է, երբ այդ այլընտրանքներից յուրաքանչյուրն օրինական է⁵: Ըստ Ա.Բոնների՝ դատական հայեցողության էությունն այն է, որ համապատասխան դեպքերում դատարանին

³ Տե՛ս **Шершеневич Г.Ф.** Общая теория права. Вып. 1-4: М., 1910-1912. Вып. 4., էջ 712:

⁴ Տե՛ս **Ա. Ս. Ղամբարյան**, Դատական հայեցողություն, էջ 68-69:

⁵ Տե՛ս **Барак А.** Судебное усмотрение. Изд. НОРМА, М., 1999, էջ 36:

լիազորություն է վերապահվում ընտրել գործի առավել ճիշտ լուծում՝ ելնելով օրենսդրի կողմից որոշակի նպատակներ հետապնդող օրենքի ընդհանուր դրույթներից, գործի կոնկրետ հանգամանքներից, ինչպես նաև իրավունքի սկզբունքներից, հասարակության և բարոյականության օրենքներից,⁶:

Իրավաբանական գրականության մեջ նաև կարծիք է արտահայտվել այն մասին, որ դատական հայեցողությունը տեսակների է բաժանվում՝ ըստ դատական միասնական պրակտիկա ապահովող գործոնների: Այդ առումով առանձնացվում են դատական հայեցողության հետևյալ տեսակները՝ հայեցողություն՝ ըստ իրավունքի նորմի մեկնաբանության, և հայեցողություն՝ ըստ գնահատողական (բազմանշանակ) նորմի կիրառման, հայեցողություն՝ իրավունքի կոլիզիաները կիրառելու դեպքում, և հայեցողություն՝ իրավունքի բացերը հաղթահարելու կապակցությամբ:

Խորհրդային իրավագիտությունում, ընդհանուր առմամբ, դատական հայեցողությունը հատուկ և համալիր քննարկման առարկա չի դարձել, ճիշտ է, տեսության մեջ ուսումնասիրվել են դատական հայեցողության առանձին հարցեր, գրվել են հոդվածներ⁷, սակայն մի շարք խնդիրներ դուրս են մնացել գիտական քննարկումներից: Տեսական աղբյուրների վերլուծությունը ցույց է տալիս, որ դատական հայեցողության հետազոտությունն ընթացել է հիմնականում վարույթն իրականացնող մարմնի ներքին համոզման, ներքին համոզմունքի ձևավորման վրա ազդող գործոնների, դատավարական որոշումների՝ որպես իրավակիրառ մարմնի հայեցողության իրականացման միջոցի ուսումնասիրության ուղղությամբ: Մյուս կողմից՝ իրավագիտությունում, հատկապես՝ վարչական իրավունքի մասնագետների կողմից, լուրջ աշխատանքներ են կատարվել վարչական հայեցողության ուսումնասիրության ոլորտում: Նշված համատեսական բնույթի հետազոտությունները դատական հայեցողության ուսումնասիրության համար կարող են ծառայել որպես մեթոդաբանական հենք⁸:

⁶ Տե՛ս **Боннер А.Т.** Применение закона и судебное усмотрение // Советское государство и право. 1979, N 6, էջ 36:

⁷ Տե՛ս **Комиссаров К.И.** Судебное усмотрение в гражданском процессе // Советское государство и право, 1969, N 4. **Бонер А.Т.** Применение закона и судебное усмотрение // Советское государство и право, 1979, №6, Пашкевич I 2. 390 К Syrie ехоб усоріііа // Coseicxoe Tcјia:Erso i nano, 19B2, N 1 և այլն:

⁸ Տե՛ս **Тихомиров Ю.А.** Административное усмотрение и право Ежегодник российского права.М., 2001 և այլն:

Հետխորհրդային երկրների իրավունքի տեսությունում և դատական իրավունքում մեծ հետաքրքրություն առաջացավ դատական հայեցողության հիմնախնդրի նկատմամբ: Բանն այն է, որ ԱՊՀ երկրների նոր Սահմանադրություններում իշխանության բաժանման սկզբունքի ամրագրմամբ դատարանը վերածվեց իշխանության ինքնուրույն կրողի: Հասարակական կյանքում դատական իշխանության դերի և նշանակության բարձրացումը պահանջում է նորովի դիտարկել դատարանի լիազորությունները և դրանց շրջանակները:

Դատական հայեցողության ուսումնասիրության արդիականությունը կապված է նաև դատական նախադեպի հետ: Պատահական չէ, որ ամերիկյան և եվրոպական իրավաբանները, շատ դեպքերում՝ իրավափիլիսոփայական տեսանկյունից, հատուկ ուշադրություն են դարձնում դատական հայեցողության հարցերին, որը, կարծում ենք, առավելապես պայմանավորված է եղել դատական ակտերի՝ որպես իրավունքի աղբյուրի ճանաչմամբ:

Դատական հայեցողությունը քննարկվում է ինչպես իրավունքի տեսության դատավարագիտության շրջանակում, այնպես էլ դատական իրավունքում: Օրինակ՝ քաղաքացիական դատավարության ոլորտում դատական հայեցողության վերաբերյալ գրվել են թեկնածուական ատենախոսություններ⁹: Քրեական դատավարությունում ուսումնասիրվել է իրավակիրառ հայեցողության այնպիսի տեսակ, ինչպիսին է քննիչի հայեցողությունը, որտեղ նույնպես վերլուծվում են համատեսական բնույթի մի շարք հարցեր¹⁰: Աշխատանքներ են տարվում նաև սահմանադրական դատավարությունում դատական հայեցողության ուսումնասիրության ուղղությամբ¹¹: Դատական

⁹ 1997թ. **Պապկով Օ.Ա.** «Դատական հայեցողությունը քաղաքացիական դատավարությունում» թեմայով պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն. Տե՛ս **Папков О.А.** Судейское усмотрение в гражданском процессе. Дис. ... канд. юрид. наук. М. 1997: Սեկ տարի անց նույն թեմայով պաշտպանեց նաև Դ. Աբուշենկոն (գիտական ղեկավար՝ Կ. Կոմիսարով): Տե՛ս **Абушенко Д.Т.** Судейское усмотрение в гражданском процессе. Дис. канд. юрид. наук. Екатеринбург, 1998:

¹⁰ Տե՛ս **Ярославский А.Б.** Усмотрение следователя при расследовании уголовных дел. Автореф. канд. юрид. наук. Волгоград. 2001: Տեսական բնույթի փորլուծության առումով հատկանշական է Պ. Մարֆիցինի՝ «*Քննիչի հայեցողությունը (քրեադատավարական ասպեկտը)*» դոկտորական ատենախոսությունը, որի մենագրությունը տպագրվել է ինտերնետում. Տե՛ս Մարֆицин П.Г. Усмотрение следователя (уголовно-процессуальный аспект). **Дис. д-ра. юрид. наук. Омск, 2003//** www.lawtech.agava.ru/pub/busled/gl.htm:

¹¹ Տե՛ս **Кажлаев С.А.** Судебное усмотрение в деятельности Конституционного суда РФ. Проблемы процессуального права. Дата выпуска 20.02.2004/) <http://subscribe.ru/archive/law.russia.advice.process-200402/20183932.html>.

հայեցողությունը քննարկման առարկա է դարձել նաև քաղաքացիական (լայն իմաստով) և քրեական իրավունքներում¹²:

ՀՀ օրենսդրության մեջ դատական հայեցողության օրենսդրական սահմանում տրված չէ: Սակայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի (18.02.2004 թ. 6-րդ հոդվածում տրվում է հայեցողական լիազորությունների բնորոշումը. «Հայեցողական լիազորությունն օրենքով վարչական մարմնին վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը»: Թեև նշված բնորոշումը վերաբերում է վարչական հայեցողությանը, սակայն այն կարելի է օգտագործել նաև դատական հայեցողության ուսումնասիրման ընթացքում:

Գիտության մեջ դատական հայեցողությունը հասկացվում է տարբեր կերպ: Դ. Չեչոտը դատական հայեցողությունը դիտում է որպես դատարանի ազատություն համապատասխան որոշման ընտրության հարցում¹³: Ըստ Կ. Կոմիսարովի՝ դատական հայեցողությունը դատարանին ընձեռված հնարավորությունն է. ելնելով կոնկրետ պայմաններից՝ ընդունել իրավունքի վերաբերյալ այնպիսի որոշում, որի հնարավորությունը բխում է օրենքի ընդհանուր և հարաբերական որոշակի դրույթներից¹⁴: Յ. Պոպկովը դատական հայեցողություն ասելով հասկանում է իրավական նորմերով կարգավորված, դատավարական ձևով իրականացվող հատուկ իրավակիրառ գործունեության տեսակ, որի դեպքում դատարանին լիազորություն է տրվում վիճելի իրավական հարցը լուծել՝ հիմք ընդունելով օրենսդրի հետապնդած նպատակները, իրավունքի սկզբունքները և օրենքի այլ ընդհանուր դրույթները, գործի կոնկրետ հանգամանքները, ինչպես նաև ողջամտությունը, բարեղծությունը, արդարությունը և բարոյականությունը¹⁵: Ըստ Աարոն Բարոսկի՝ հայեցողությունն իշխանությամբ օժտված անձի լիազորությունն է երկու և ավելի այլընտրանքների միջև ընտրություն կատարելու, որտեղ այլընտրանքներից յուրաքանչյուրն օրինական է¹⁶: Ինչպես տեսնում ենք,

¹² Տե՛ս **Степин А.Б.** Судебное усмотрение в частном праве (Вопросы теории и практики). Дисс. канд. юрид. наук. 2003, **Грачева Ю.В.** Судейское усмотрение в уголовном праве. Дисс. канд. юр. наук. М., 2002, **Рарог А.И., Грачева Ю.В.** Понятие, основание, признаки и значение судейского усмотрения в уголовном праве. Государство и право, N 11, 2001, Рарог А.И. Усмотрение правоприменителя при квалификации преступлений. // Уголовное право, N1, 2000.

¹³ Տե՛ս **Чечот Д.М.** Административная юстиция (проблемы применения). Л., 1979, էջ 68:

¹⁴ Տե՛ս **Комиссаров К.И.** Задачи судебного надзора в сфере гражданского судопроизводства. Свердловск, 1971, էջ 26:

¹⁵ Տե՛ս **Папков О.А.** Судейское усмотрение в гражданском процессе. Дис. канд. юрид. наук, М., 1997, էջ 24:

¹⁶ Տե՛ս **Аарон Барак** Судейское усмотрение. Перевод с англ. М., 1999, էջ 299:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում հայեցողական լիազորությունների բնորոշումը բավականին մոտ է Ա. Բառակի տված բնորոշմանը¹⁷:

Տեսության մեջ նշվում է, որ դատական հայեցողությունը բազմաշերտ երևույթ է, և դրա հասկացությունը անհրաժեշտ է բնորոշել հայեցողության առանձին տեսակները վերլուծելու ճանապարհով¹⁸:

Տեսության մեջ առանձնացվում են դատական հայեցողության այնպիսի տեսակներ, ինչպիսիք են իրավական դիրքորոշումներ, դատական նախադեպեր, դատական պրակտիկայի ամփոփում, դատական նորմաստեղծ գործունեություն, երբ օրենսդրի սահմանած իրավական նորմը բավարար չէ վեճը լուծելու համար, և այն լրացվում է դատական պրակտիկայում. դատական հայեցողություն, որն անմիջապես բխում է օրենսդրության մեջ գնահատողական հասկացություններից և այլն: Յու. Տիխոմիրովը, հետևելով Ա. Բառակին, առանձնացնում է դատական հայեցողության այնպիսի տիպ, որը վերաբերում է փաստերի որոշմանը: Հայեցողության այս տեսակը դատական վարույթի ամենակարևոր հարցերից է, քանի որ դատարանում գտնվող վեճերի մեծ մասը վերաբերում են փաստերին¹⁹: Այսպիսով՝ իրավակիրառ պրակտիկայում դատական հայեցողությունը բավականին լայն հասկացություն է, քանի որ դատական հայեցողության մասին է խոսվում բոլոր այն դեպքերում, երբ առկա է իրավական նորմերի մեկնաբանում, օրենքի և իրավունքի անալոգիայի կիրառում, փաստական հանգամանքների գնահատում²⁰:

Ամփոփելով դատական հայեցողության բնորոշումները՝ առաջարկում ենք մեր հայեցակարգային մոտեցումը, ըստ որի՝ դատական հայեցողությունը բարդ ու բազմաշերտ հասկացություն է, որը ներառում է հետևյալ նվազագույն բաղադրիչները՝ բարձր իրավագիտակցության և իրավական մշակույթի մակարդակ, մեկնողական

¹⁷ Տե՛ս Տեսության մեջ Ա. Բառակի դատական հայեցողության բնորոշումը ընդունվում է ոչ բոլորի կողմից: Толчеев М. Судейское усмотрение//Еженедельная газета эж-ЮРИСТ, N 26/2004, www.consultant.ru/review/ez2004-07-05.html.

¹⁸ Տե՛ս Васильев Л.М. Практика как критерий истины в уголовном судопроизводстве. Краснодар, 1993, էջեր 139-140:

¹⁹ Տե՛ս Тихомиров Ю.А. Теория компетенции.М., 2001, էջ 272:

²⁰ Տե՛ս Bogdan M., Comparative Law. Kluwer. 1994, էջ 121-122:

արվեստի (հերմենևտիկայի) տիրապետում, իրավաբանական տեխնիկայի և տրամաբանության կանոնների իմացություն և այլն:

Այսպիսով՝ դատական հայեցողությունը կամային-ինտելեկտուալ գործունեություն է, որն ուղղված է իրավական վեճերի լուծման համար դատական նորմի (իրավական դիրքորոշման, նախադեպի, դատական պրակտիկայի վերլուծության և ամփոփման) մշակման և կիրառման համար:

Դատական հայեցողության բնորոշումից պարզ է դառնում, որ այն պայմանավորված է, օրինակ, օրենսդրության մեջ բացերի կամ հարաբերական որոշակի դրույթների առկայությամբ (նշված հարցերն առանձին քննարկման առարկա են): Հարաբերական որոշակի դրույթները, արժեքավորվող հասկացությունները, օրենքի բացերն իրավական ոլորտում առաջացնում են անորոշություն, ինչն ավելի է խորանում, եթե դատական մարմինն ունի դատավարական նշանակություն ունեցող տվյալների պակաս: Անորոշության պայմաններում հայեցողության հիման վրա որոշում ընդունելիս հատուկ նշանակություն է ձեռք բերում իրավունքի սուբյեկտների օրինական շահերին վնաս հասցնելու ռիսկը: Ուստի անհրաժեշտ է քննարկել դատական հայեցողության և իրավակիրառ ռիսկի հարաբերակցության հարցը:

Հայեցողական լիազորությունների իրականացումը՝ որպես ռիսկային կամ չնորմավորված վարքագիծ²¹, կարող է հանգեցնել իրավակիրառ սխալների: Տեսությունում նշվում է, որ իրավակիրառ սխալների²² առաջացման վրա ազդեցություն է ունենում նորմատիվ-իրավական բազայի ցածր որակը: Հատկապես մեծ ազդեցություն են ունենում ոչ հստակ տերմինները, հասկացությունները, միևնույն երևույթները

²¹ Տե՛ս **Мамчун В.В.** Правоприменительный риск. Автореф. дис...канд. юрид. наук. Нижний Новгород, 1999, էջ 17:

²² Գիտության մեջ միասնական մոտեցում չկա իրավակիրառ այս հասկացության և իրավախախտման հասկացության վերաբերյալ: Հիմնականում առանձնացվում են իրավակիրառման ռիսկի վերաբերյալ երեք մոտեցումներ. Առաջին՝ որպես օբյեկտիվորեն հակառակ արարք, որպես բարեխիղճ մոլորության կամ անզգուշության արդյունք, որպես իրավական նորմի ցանկացած շեղում՝ անկախ անձի մեղավորությունից: Տեսության մեջ բուռն վեճերի տեղիք է տվել հատկապես դատական սխալի, քննիչի սխալի և իրավախախտման հարաբերակցության հարցերը: Այս մասին մանրամասն տե՛ս **Назаров А. Д.** Влияние следственных ошибок на ошибки суда. М., 2003, Шейфер С.А. Доказательства и доказывание по уголовным делам: проблемы теории и правового регулирования. Тольятти, 1997, Зайцев И.М. Устранение судебных ошибок в гражданском процессе. Саратов, 1985, **Соловьев А.Б.** Доказывание в досудебных стадиях уголовного процесса России. Научно-практ. пособие. М., 2002, **Дугин А.Т.** Проблемы борьбы с уголовно-процессуальными нарушениями при расследовании преступлений средствами прокурорского надзора. Автореф. канд. юрид. наук. М., 1995 և այլն:

տարբեր տերմիններով անվանելով և հակառակը՝ օրենսդրության մեջ մեծ թվով արժեքավորվող հասկացություններ չափից ավել անհարկի օգտագործելը: Վերջիններս թողնվում են իրավակիրառողի հայեցողությանը, ինչն էլ երբեմն դառնում է սխալ որոշում կայացնելու պատճառ:

Պետք է համաձայնել, որ իրավակիրառ սխալի հնարավորությունը պայմանավորված է հայեցողության ինստիտուտի գոյությամբ: Դա բացատրվում է նրանով, որ իրավական հայեցողությունը միշտ կապված է սուբյեկտիվիզմի, իրականացվող գնահատման և գործողությունների ազատության հետ²³: Այս ամենը նշանակում է, որ դատական հայեցողությունն այն իրավական ինստիտուտներից է, որի նախատեսումը և կիրառումը պահանջում է գիտականորեն հիմնավորված, հավասարակշռված և գրագետ մոտեցում, և նույնիսկ՝ զգուշություն:

Թեև մեզանում դատական նախադեպը՝ որպես իրավունքի աղբյուր, համընդհանուր ճանաչում չի ստացել, սակայն նախադեպի գիտական և պաշտոնական ընդունումն օբյեկտիվ և նույնիսկ՝ բնական գործընթաց է: Դատական նախադեպի իրավական հիմքերի ամրագրման ուղղությամբ պետական իշխանության կողմից արդեն որոշ քայլեր արվում են: Կարելի է նշել, որ դատական նախադեպը լրացուցիչ լիցք է հաղորդում դատական հայեցողության խնդրի նկատմամբ ունեցած հետաքրքրության բարձրացման և ուսումնասիրման հարցում: Ժամանակակից իրավագիտությունում դատական հայեցողությունն ուսումնասիրվում է տարբեր հարթություններում, ինչը վկայում է այդ հասկացության բազմաբովանդակ, բազմաշերտ և բարդ լինելու մասին:

²³ См. **Мурсалимов К.Р.** Правоприменительные Мурсалимов К.Р. Правоприменительные ошибки. Проблемы теории. Автореф. дис. канд. юрид. наук Нижний Новгород, 2000, էջ 21:

ПОНЯТИЕ, ПРИРОДА И РОЛЬ СУДЕБНОЙ ВЛАСТИ В ПРОЦЕССЕ СОЗДАНИЯ ПРЕЦЕДЕНТОВ И СУДЕБНОЙ ПРАКТИКИ

НАЛБАНДЯН АНАИТ

Соискатель Института Философии, социологии
и права Национальной академии наук РА

Аннотация. В этой статье автор подробно проанализировал содержательное понятие, сущность, характерные особенности судебной власти, а также ее роль и значение в процессах формирования и развития судебного прецедента и судебной практики.

Подобный статус судебной власти обусловлен тем, что она рассматривается как независимая и самостоятельная ветвь государственной власти и наделена соответствующими функциональными полномочиями.

Ключевые слова: судебная власть, нормотворческая функция государственная власть, судебный прецедент, судебная практика, судебное усмотрение.

THE CONCEPT, ESSENCE AND ROLE OF THE JUDICIARY IN THE FORMATION OF JUDICIAL PRECEDENT AND JUDICIAL PRACTICE

NALBANDYAN ANAHIT

Applicant of the Institute of Philosophy,
Sociology and Law at the National Academy
of Sciences of the Republic of Armenia

Summary. In this article, the author has analyzed in detail the substantive concept, essence, characteristic features of the judiciary, as well as its role and importance in the processes of formation and development of judicial precedent and judicial practice.

Such a status of the judiciary is due to the fact that it is considered as an independent and autonomous branch of government and is endowed with appropriate functional powers:

Keywords: judicial power, rule-making function, state power, judicial precedent, judicial practice, judicial discretion.